



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ԳԵՐՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՀ

### ԿԵԱՆՔՆ ԵՒ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹԻՒՆԸ

(Ըստ տես Թագմ. 1929 էջ 3)

Դ.

1. Ինչպէս կանիւաւ յիշատակեցինք, Գէորգ Ապտուլանի իր վարպետին՝ Ալիշանի հետ միշտ թղթակցութեան մէջ էր, իրեւ որդի մը իր պաշտելի հօր հետ բարերազդութիւն մ'է մեզ համար որ Ալիշանի գրած նամակներէն գոնէ մի քանին անկորուած ձեռքերնիս հասած լինելով, կարող ենք մեր ընթերցողաց վայելել տալ այդ այնքան շանազրգուական և ազգային յիշատակներով լի զրութիւնները. ասոնց մէջ թուականի կարգաւ մեր ձեռքը անցածներուն առաջինն է հետեւալը:

Վեճեախիկ, 11 ապրիլ 1872.-իմ սիրելի Պր. Գեորգ. — Մի ըստ միոչէ երկու նամակներդ առի, յորու կ'ըսես թէ գալ շարար անյիշել պիտի ընդունիմ Մորդմանի ճամփն թարգմանութիւնը, ևն. այն շարաթներն անցան, այլ խոստացած չերեցաւ. Ձեզի պէս արուեստի գրադեալ ան-

ձանց համար զարմանք չէ այսպիսի ականայ ուշացմունք. այլ ես աշակերտաց շատ հեղ խրամած իմ ըլլամբը ըլլալէն առաջ չպատմել, վասնզի երրեմ չըլլար կամ կարծուածին պէս չըլլար թողլով զայս, ես ալ պատասխանելու շուշանալու համար, միանգամայն և չնորհակալ ըլլալու խաւրածներուդ և խաւրելիքիդ, կը զրեմ զայս:

Բնեազրաց վրայ թողլով տեսութիւնու երր տեսնելու ըլլամ որոշ բան մը, որով հետեւ ինչուան հիմայ լրազրաց մէջ գրուածները դասողութեան շատ լոյս մը չեն տար. այլ լուրերուն մէջ ինձի ամենէն ախորժականն էր Ապտուլահանին եղրարց ընդունելութիւնն զոր ըրեր են հնախուզին և իր ունկնդրաց, որոյ համար անզամ մ'ալ կ'ողջունեմ Պ. Եղրայրներդ, փափազելով այսպիսի ժողովօք և ընկերութեամբ զրադիլ շատ հեղ՝ անոնց և համայն ազգայնոր,

Վանայ գիւղերու ցանկն ալ ընդունեցայ, շնորհակալութեամբ յօժարութեանդ վրայ. այլ ես արդէն ունէի զայն շատ տարի առաջ տպագրեալ թերթերով վասարուցական Ալրծոյն. կը ցաւիմ որ զաղափարողն ժամավաճառ եղեր է ինձի համար. եթէ Դ Հայոց գեղերու ցանկ մ'ըլլար, պիտանեցն կ'ըլլար, կամ նոյն իսկ Բարձր Հայոց հարաւային կողմերու. այսինքն Անձուրի, կեղոյ, Զմշկածագի, Չարսանճազի, Գարանչօրէնի, ևն կողմանց. Աւելի արդեօց հանոյական էին՝ եթէ Ձեռագրաց յիշատակարաններ ալ օրինակած է հաւատարմութեամբ, և քիչ մը պարարտ բան, և ոչ Գարրիելեան փշած փողոյն նման Զարարիայ Առանցյան երկուող յիշատակը. քան զոր երկայն է զայն նոր օրինակողին յիշատակարանը. կարծեմ թէ ինքն պիտի ունենայ Եւղոկիա գտուած բանի մը հին աւետարանան յիշատակարաններ, ՈՒԳ. ՌՍ. Թուականօք. այլ աւելի փափագելի է ինձ Վանայ Ս. Վարդան եկեղեցւոյն աւետարաններ, ի թու. ՈՀԳ. զոր պիտի ունենայ նա. նոյնպէս հոն եղած Նարեկին ի ՈՂԸ. նոյնպէս կտուց, Լիմ և Վարագ վանաց քանի մը ձեռագրաց յիշատակարաններ. Մէկ Սամուէլ Կրօնաւորի նամակ մ'ալ պիտի ունենայ զրեալ ի Ջորեհնազիստն ի ՊԺԲ. թուի, որ գտուի ի Սերաստիա, և այս ալ հետաքրնելի է առ առ:

Երկրորդ զրովդ ընդունեցայ Լեռն Գ. Թագաւորի կրկնարուեատ պատկերը, յոր դրկողի սէրը կ'ընդունիմ առաւել քան չղըկած եթէ դու յիսկականէն լուսատիպ հանէիր՝ զայն շատ հաճութեամբ կ'ընդունէի. բայց այդ խաւրած արդէն պղնձի վրայ փորգուղը այլայլած են, և յայսմ չեմ ներեր Ապտուլլահ լուսազրի մը՝ որ իրը նմանատիպ պատկեր Հայ թագաւորի մը ընդունի զայն. Սմբատայ օրինազրաց միջի պատկերն՝ զոր դուք լուսագրած էք՝ շատ աւելի իսկականութիւն ունի, և շատ ու շատ հաճու պիտի ըլլայ մեզի բան ի Նոր Նախիջևան գտուած աւետարաննին այլափոխեալ պատկերը. գոնէ այնշափ այլա-

փոխեալ՝ որչափ պատկերին տակ գրուած տեղեկութիւնն, թէ Լեռն Գ. ծնեալ ըլլայ յամի 1225, մինչդեռ հայրն Լեռնի չէր կարգուած, և 10 տարի յետոյ ծնած է Լեռն; իսկականին մէջ կարծեմ թագ և աթոռ չկայ, այն ձևով աթոռ ալ չերնիր այն զարու պատկերաց մէջ. զլիու վրայի հրեշտակաց դիրքն ալ փոխուած է. Լեռնի երկու կողմն ալ իր և հօրն անուններն կան իսկականին մէջ՝ զոր պատկերը փորագծել տուողը Թողուցեր են: Ուստի այդ պատկերը արեւու և լուսնի կերպարանց ալ ունենար՝ ինծ համար փնդի բան մ'է. քաջ լուսագրողի մը համար ալ այնպէս պէտք է ըլլայ:

Ատենօք Քիզի նշամարիկ մը խարեցի, Դու ցաւէիր որ տեսարաններն լուսազրութեամբ հանուած չեն. ես ալ չցաւիմ այդ պատկերիդ վրայ, զոր նախ առաջին նկարողն ի հարկէ այլափոխեր է, յետոյ գծագրող են: Ես Քիզմէ և Եղայայններէ ուրիշ բան կը սպասեմ. Գործիքնիդ շալկեցնէր, և թէ ոչ շրջան մ'ընէք՝ գոնէ անկիմ մը ի Հայաստան, և քանի մը հարիւր տեսարաններ բերէք, նաև բեւեռազիրներ: Բայց Վիշնիկ Ալային ըսէ՝ որ այս բանն Նազմաննեմ բալուածքրով չըլլար, քիչ մ'ալ հնկայանեմ ըլլալու է, լաւ ևս ձարտպիւնեմեմ: — Բարեհացակամ Զեր Հ. Կեռն Մ. Ալիշանեան կլլ..

Սոյն զրութենէս երկու օր վերջ՝ ապրիլ 13ին, Հ. Ալիշան Գէորգայ խոստացած Մորդմանի բեւեռածեւ արձանազրութեան թարգմանութիւնը ընդունելով, համառուիր իր տեսութիւնը և դատողութիւնը կ'ընէ Վանայ բեւեռազրաց՝ Մորդմանի և ուրիշներու կողմէ կատարած ընթերցման՝ որպես բան ստորյա լինելու կամ չլինելուն նկատմամբ, կարդանց այդ նամակին ալ՝ որ նոյն բան շահեկան է, որքան առաջինը:

Վենեափիկ, 19 ապրիլ 1872. — Սիրելի Փարս (Գնորդ). — Անցեալ շաբաթ թուլթս գրելուն երկրորդ օրը ընդունեցայ Մորդմանայ բեւեռազրոց վրայ խօսածին թարգմանութիւնը. բայց մեկ և ոչ երեք ինչդեռ այնպէս նշանակեր էիր թղթիկից մէջ, որով զու-

տով կարդալէս ետև՝ օքինակը իւարեցի առ վ. Հ. Եսազնեան վարդապետ մեր, որ աւելի հետաքնին է այն տեսակ գրուածոց։ Խակ իմ առ այժմ տեսութիւնս այս է, թէ բառաւած բաներն ամէնն ալ ստոյգ կրնան ըլլալ՝ թէ ընթերցուածն ստոյգ է, խակ ընթերցուածին ստուգութեան վրայ դատաստան չեմ կրնար ընել, մինչև որ չզիտնամ թէ ինչ կանոնվ կարդացեր է, իրմէ շատ առաջ ուրիշ հետափոյզը ալ ըսեր էին թէ հինգ թագաւորաց անուանց և գործը կը յիշուին յարձանս Վանայ, որոց մէկն ինքն Մորդման ալ յիշեր է (այսինքն կարդացողներն մէկը)։ Մ'եր պատմութեան մացորդաց մէջ ալ յիշուի որ հինգ ինցնազուլու կամ աշխարհակալ թագաւոր ունեցեր ներ մի բառ միուշէ պայազառելով, ճամանակն ալ յարմար է, անուանցն ոչ նոյնպէս, բայց միայն Փառնաւազն՝ մերձագոյն Խակ տեղեաց անուններուն հիմակոււան տեղեաց նմանութիւնը, շատ տեղ բռնազոսեալ է յայտնապէս, և անոնցմէ յարմար անուանց ալ յիշուին հիմայ, սակայն անով հանդերձ՝ չեմ համարիր թէ նոյն ըլլան Խակ չաստուածոց անուանց ստուգութիւնն ալ աւելի տարակուական է, զուցէ աւելի ևս իրենց կերակրոյ կամ զոհի բաժինն, մէկուն ինչուան կէս կենդանի ևն ևն։ Աւելի տարակուականն ալ ինձ թուին՝ գրուածին հարիր կամ 120 հատ տառելու և ձեւերն այնչափ բան կարդալու համար կարծեմ կարդացողն որչափ նեղը մանէ՝ այնչափ կը ստիպուի տառելու և ձեւը շատցընել կամ շատ իմաստներ տուլ անոնց։ Ասիկայ ոչ միայն Մորդմանի համար Կ'ըսեմ, այլ և Քառինացնի և նմանեանց։ Վերջապէս պէտք է զարձեալ սպասել, Մորդմանի ընդարձակ գրուածին, վասն լաւագոյն զատելոյ։

Դառնալով մեր լուսագիր տեղանկարութեան ինդրոյն, կարծեմ թէ ճեմելու ոչ միայն ճարտար բռուով բարդելու է, այլ ձեզ ի ձեզ (բայց հայրէն և ոչ թուրքարէն)։ Վասն զի վախեմ թէ Ձեր դանդաղ զանօց (որ և է պատճառաւ՝ որ Ձեզ զիւ-

տելի է) ինձի ուրիշ գործակատար մը պիտի գոտուի։

Ողջունելով հարազատներդ և շնորհընվ Զատիկ մաղթելով, մամ բարեացակամ Հ. Ղևոնդ Ալիշանեան կլլ.։

Կարելի չէ երկրայիլ որ այս և նմանապէս յաջորդ նամակներն ունեցած են իրենց փոխազարձ պատասխաններն Գէորգ, զայ կողմէ գրուած, ինչպէս ըստ պարագային՝ երրեմն կը յիշէ կամ կ'ակնարկէ Հ. Ալիշան իր թղթոց մէջ, Այդ նամակներէն մին ալ կը համարով Գէորգայ 11 ապրիլ 1872ի գրան, որով կը հրափրէ զ. Ալիշան ճանապարհորդէլ միասին դէպ ի Հայաստան այս հրաւեր-առաջարկը, «չ առաջինը և ոչ ալ վերջինը եղած է, և սակայն երրեց իրականացած չէս առ Գէորգ զրած յիտարակ երկու պատասխանագրերուն մէջ Հայոց Նահապետը իր «Ճանրաշարժ և անվարժ մէկ մ'ըլլալը» յիւ շեցնելով՝ կ'աւելցնէ նաև թէ՛ և իս իմ տկարութիւններս զիտնալով՝ չեմ խոստանար այնպիսի ուղեկցութեան...» զայս ըսելով՝ կարծես մի անգամ ընդ միշտ այդ խնդրոյն վերջակէտը կը զնէ։ Բայց մենց միւս կողմանէ կը մտածենց թէ՛-իր ցեղին անկեղծ սիրով բարախուն միրաց և կըօնի ու հայրէնիրի խորանին հրով տուշորող ողին, որ այնքան հետամուտ էր մեր հարց ու աւերակ հայրեննեաց յիտին յիշատակները և նշիմարաց մացորդներն անզամ պրատելու, ըննելու և ի մի հաւացելու, — մի զուցէ հասկցնել ուզէ այդու՛ թէ անազը կը զգամ նիթթական աշորվ տեսնել ու չափել որդափարիսն աւերացնելու իրիրին իւ մոյ հայրեննեաց։ Թողունց իրեն որ իր անփական ոնովն պատասխանէ իր Սահին։

Վեճնախիկ, 17 մայիս 1872. — Միիրեկ Պարու իմ. — Ամսոյս 11ին զրածդ հիմա առի և անմիջապէս կը պատասխանեմ... կընաս և արդէն զուշակես որ ես ծանրաշարժ և անվարժ մէկ մ'ըլլալով՝ չեմ կարող հրաւերթիդ ընդունող ըլլալ, եթէ լուսատպութեան հրաշալի արտեսատին պէս և աւելի հրաշարուեստ մը զիս թուուցանէր վանայ ծովուն եզերը՝ գտնառելուս ոչ առա-

կաւ գոն կ'ըլլայի : Հիմա ուրախակից կ'ըլլամ Մոլտեհի ձեռնոտութեան . յուսացի որ դրամական օգնութիւն մ'ալ ընէ . ինքն արդէն այն կողմեր ճանապահորդած է , և անով յօժարած պիտի ըլլայ . միայն թէ ըլլայ որ իր էտ-ոյացիր անձն վախ ձգէ տեղուոյդ տէրութեան , և դժուարութիւն մ'ըլլայ : Ալզեկցաց մէջ չես յիշած լուսագրողս , արդեօք ձեր գործատունչն ալ արուեստաւոր կամ : Միայն բեւեռագանկներն չէ , ի հարկէ տեսարաններ ալ պիտի լուսագրեն , և արժանաւորք չեն պակսիր յոլորոտ վանայ , մանաւանդ խւաթայ խարապա աւերակներն , շրիփթերն ևն ևն , և շատ վաներեր : Ձեր ընտրած միջոցին վասպուրականի և ծարոնյ , անրաւ բան կրնան գտուիլ , որը թերեւս Յ/<sup>1</sup> , ամսէ ալ աւելի ժամանակ պահանջնեն . բայց այն չափով ալ գոն ըլլանց իրրկ սկզբնաւորութիւն առաւելագունին : Միայն մի՛ արնութիւն գտուիլ մասնաւոր լուսագրող մ'ալ պիտի գայ այդ կիողմերը , առաջնութեան պատի և իրաւունքն ապահովեցէք : — Անցողարար յիշեմ , թերեւս արդէն ծանօթ ըլլայ Մորդմանայ որ Միւլհէնքն տաճականդիւացի սպան իր նոր հրատարակած գրոց մէջ (Wild life among the Koords) յիշէ ընդ մէջ սահմանաց վանայ և կոսորոյ (Քողորդ) բական կամ ֆական անուամբ տեղ մը լերան վրայ բեկուագիր արծան մը , զոր ինքն չէ կըրցած ընդորինակել : Այս շափի ժ ժամանաւ , ողջունելով հարազատներդ և յաջողութիւն մաղթելով մնամ բարեացակամ չ . Ղեռնդ Մ . Ալիշանեան կՄ . :

Այս նամակէս ցիշ շատ կը պարզուի արդէն թէ ինչ պարագաներէ ծագում առած է Գէորգ Ապուուլահի զէպ ի Հայաստան ճանապահորդելու խնդիրն , որը սակայն՝ ինչպէս Ալիշանի յետագայ նամակէն կը տեսնուի , յաջորդ տարուան կը յետաձգուի և դժբաղդաբար՝ ըստ գուշակութեան նոյնինքն Ալիշանի անգործադրելի կը մնայ :

Վեճնութիւն 26 յուլ . 1872 . — Ազնիւ Գէորգ Աղայ . — Ամսէ մը առաջ մէկ հրաւիրակ

գիրդ առեր էի , առաջարկեալ ճամբրորդութեան մը համար , որ յետ մնացեր է . և չզիտեմ արդեօք զալ տարի ալ պիտ յանցողի . ես Զեգի համար կ'ըսեմ , վանզի ես իմ տէկարութիւններու զիտնալով՝ չեմ խոստանար այնպիսի ուղեկցութեան , այլ փափազիմ որ զիտնական գոնէ տեղազիծ և լուսագիր անձանց ընկերութեամբ ըլլայ :

Այս օրս Սերովէ հարազատիս թղթով ընդունեցայ պղնձեայ անզրոյ մը զիլոյ պատկեր , զոր խաւրեր ես ինձ , և չնորհակալ եմ , այդպէս հարիբաւարդներ յուսամ որ կարենայիր և կարենան խաւրել , իթէ զոր կամ ցեզի պէս մէկ մը լուսագրական գործեաւ ելնէց ի Հայաստան . իրաւ անցրիներ զանել զիւրին չէ առանց պեղմանց , բայց ուրիշ բաներ չեն պակսիր , շնչք , բանզակք , արձանազիր , տեսարանց ևն . . — Ողջունելով ծնողդդ և Եղբայրները մնամ բարեացակամ չ . Ղեռնդ Մ . Ալիշանեան կՄ . :

2. Այս ասեններս Գէպովուրի նկտրիչը , որ հիացող մէկ Ապուուլահ եղբարց ճարտար արուեստագիտութեան , Պոլսէն Վենետիկ ճանապահորդութեան առթիւն անոնց յանձնարարական մէկ զրով կ'այցելէ ի Ա . Ղազար և Մ . Ռափայէլեան վարժարան՝ որուն վարիչն էր Հ . Ալիշան , և մեծ հիացումով և գովինսով կը պատմէ Ապուուլահեանց փայլուն գործունէութիւնը : Հիւրմիւզեան Գէր . Եղուարդ իր մէկ համառոտագիծ նամակովն (1872 նոյ . 21) , զոր Գէպովուրի Պոլսա վերաբարձին կը յանձնէ Ապուուլահ եղբարց , ի միջի այլոց կը զրէ հետևեան . <... Իրմէ (Գէպովուրիէ) իմացանց ամենուդ ողջ առողջ ըլլալը , մանաւանդ պատուական հօրենութ՝ որ մեր ցեղին տէրանն է . Աստուած զետ շատ տարիներ տայ , ձեր տանը օրինութիւնն է : Ետ ալ գովեց զձեզ Գէպովուրին , ու բաներնուդ յաջողութիւնը պատմեց , ուրախացուց զմեզ , կը խնդրենք Աստուածմէ որ միշտ նոյն յաջողութիւնը չնորհէ ձեզի ...» :

3. Ապուուլահ եղբարց (1875 ին)<sup>1</sup>

1. Զարդարեան եղբ . Ցէտուակարան երեւելի ամենայուրեանց զրցին մէջ նշ . 1874:

գդրաղութիւն կ'ունենան՝ իրենց զրիթէ 83 ամեայ ծերունի և պատուական հայրը կորսնցնելու թարի, ուղղամիտ և ազնիւ ծիրբերով օժտուած անձ մ'էր Արքահամ, որ ընտանիքի տիպար հայր մ'ըլլալէ զատ, կարուտեալներու և թշուառներու ալ հայր եղած է իր բարեկործութիւններով։ Հիւրմիւզեան Գիրապայծառը Գէորգ և Կուուրդ այս տիխուր առթիւ հետևեալ ցաւակցական գիրը կ'ուղղեն։

Վենետիկ, 6 օգոստ. 1870. — Ազդիք ու  
սիրելի Ապոռոյաննեան հարազատաց ողբայն  
ի Քրիստոս: — Կրնաց երեակայել ինչ  
ցաւ տուաւ մեր սրտին՝ Ձեր այնպիսի ա-  
ռացինի, ողորմած ու եղբայրակը Հօրը  
վախճանը, որն որ մեր ազգատոնմին թէ՛  
երիշագոյնն էր և թէ՛ պարծանըր, և որն  
որ ձեզի պէս ազնիւ զաւկըներ ալ հաս-  
ցուց մեր ազգին անունը Եւրոպայի մէջ  
իրենց ճարտարութեամբն ալ ճանչցնելու:

կ՝ երևակայինց ազնիւ մօրերնուղ սրտին  
ցաւը, որն որ հիմայ Հրամանքնիդ միայն  
կրնաց մեղմել, վախճանելոյն տեղը ըրո-  
նելով, անոր պակսիլը անզգալի ընելով  
իրեն. և մանաւանդ անոր ու մօրերնուղ  
բարութեանը հետաելով, Այծեմիկ բարե-  
պաշտ տիկնոջը պատութիւնը գտտէց, ո-  
րուն մեռնելչն ետքն ալ իրմէն բարերա-  
բեալ որբեն ու որբաւարիները փառ ժո-  
զված լաւով ու ողբաւով Քետրոս Առա-  
քեալին կը ցուցընէին անկէց ընդունած  
հագուստներնին ու անոր ըրած բարիքը Կը  
պատմէին, անանկ ո՞ր սուրբ առաքելոյն  
սիրոր ցարեցաւ ու յարուց վախճանեալու:

Գենց տարակուսիր որ աս մեր զգաց-  
մոնքը իմացնէց իբենց, ամենուն ալ մեր  
բարեները զատ զատ տալով, Աստուած  
օրնէ զամենք ալ՝ † ն. Ե. Գէորգ Վ.  
Հիւրմիւզ Արքեպոս. և ընդհ Արքայ, † ն.  
Ե. Հ. Եղուարդ Հիւրմիւզ Արքեպոս. Եփ-  
րակայ:

ինչպէս կը տեսնենց այս հակիրճ տող գերը՝ իրենց անպահոյն, ընական և ընտանեկան պարզութեամբը, արդէն ցայտուն կերպով կը պատկերացնեն հանգուց ցելոյն ընտափը նկարագրութը, որուն շիրմին

գեղեցկապյան զարդը կը կազմեն իրմէ բաւ-  
լերարեալներուն երախտազիտական և սի-  
րոյ արցունը կաթիլներէ ձևացած ծաղ-  
կապակներն :

4. Ապուռլահ Եղբարը իրենց լուսա-  
նկարչութեան արուեստին միջցաւ ազ-  
գային տաղանդաւոր արուեստագէտներու  
և ճարտարապետներու գեղեցիկ ձեռա-  
կերտները բնդշանուր Եւրոպայի ծանօթա-  
ցնելուն մէջ մեծ քամին մ'ունեցած են։  
Լոնտոնի, Բարիզի, Պիտերբուրգի, Մոս-  
կուայի և ուրիշ շատ ցաղաքներու մէջ  
իրենց տաղանդի բնագրումը կրող գեղ-  
արուեստ նկարներն աւելի քան հիացուլի  
և քարձր գնահատութեան արժանացած են։  
Նախկին Միխիթարեան հմտա բանասէր  
Ուրիշա վրդ. Պարոնեանի Լոնտոնէն ա-  
գէորդ Ապուռլահ գրած մէկ նամակը՝  
հաւասարէց մ'է մեր այս ըսածին. «...Ծնոր-  
հակալութիւնս Զեր յուղարկած լուսա-  
նկար տեսաբանաց. շատ՝ և եւելոց շա-  
հանոյ անցան ինձ, որ նոր էին ինձ ամե-  
նեին» ։ Պարոնեան Վլրդ. զայս ըսելիք յե-  
տոյ՝ կը ինդրէ որ ուրիշ հաւաքածոյ մը  
ևս դրկէ՝ «Կարկոր Լորափ մը ընծայելու-  
համար, որուն ընտիր հայկական զքալո-  
գիրները ցանկեցի կ'Եւսէ. ինըը սիրող է  
գեղարդեսափից, և չեմ երկրայիր որ իրեն  
շատ ախորդելի պիտի ըլլայ այդ հայկա-  
կան ճարտարապետութեանց նշիարները  
տեսնելու...»։

5. Այս ատեններս էք որ ՄԵծ դուքս  
Նկոլս Ռուսիոյ՝ Պոլիս եկած լինելով,  
Կ'այցելէ Ապուռլան եղարց գործառունը  
և իւր լուսանկարը հանել ատալոյ մեծա-  
պէս գոն կը մայ. և երբ Թօւրք և Ռուս  
պատերազմին (1877-78) ռուսական յաղ-  
թական բանակը կը հաստատով Սան  
Ստեփանովի մէջ (26 փետր. 1878), ՄԵծ  
Դուքսն որ հոն Առաքել Պէջ Տատենսի առ-  
պարանը կը բնակէր, երկրորդ անգամ՝  
իր մօտ կանչել կու աայ Գէորգ Ալպառլու-  
լահ՝ իր բանակին սպայակոյտով և գրլ-  
խաւոր զօրագլրներով միասին խմբա-  
նկարուելու համար: Այս խմբանկարին մէջ՝  
որ 107 անձինքներէ բաղկացած էք, ի

միջի այլցը կային կայսերապուն իշխան-ներ, կոմսեր, զօրավար նուվալով, զօրա-վար Ցոռլեբէն, զօր. Նեպողյիշչցցի, զօր. Գուրգոյ, զօր. Ակրուէէթ, ինչպէս նաև երեք հայեր Ծովակալ Տուկորուցով, Գնդապետ Մուրաստով, որ լոփչայի մէջ մին յաղթա-նակ տարած էր, և բանակին գանձապետ՝ Սուրենեան, ևն; Գործողութիւնը աւարտե-լէն յետոյ՝ Դէորդ Ապառուլահ, հանոյալիք համարձակութեամբ մօտենալով Նիկոլա Մ'ծ դուքսին, Կ'առաջարկէ անգամ մ'ալ առանձին հանել իր կիսանձնեայ նկարը (Buste). Դուքսն ակնարկ մը պարցնե-լով իւր վրայ-զիխուն Կ'ըսէ. Mon habit est trop usé,որուն ի պատասխան Գէորգ բակոյն Կ'աւելցնէ. Usé par la victoire: Այս կտրուկ և նշանակալից պատասխանը ախորդելի անցնելով Մ'ծ դուքսին անուշ ժպիտով մը իր հաճութիւնը կը յայտնէ. և առանձին կոյս լրագրին թղթակիցը՝ որ նոյն պահումն ներկայ կը գտնուէր այս խօ-սակցութեան, իր լրագրին կը հաջորդագրէ: Հոս պատշաճ կը սեպեմ յիշատակել մանրադէպը, որ տեղի կ'ունենայ Առարել Վէլ Տատեանի պարտիզին մէջ ի Ան Մտե-ֆանոյ: Զօրավար իգնատիէֆ՝ Ռուսիոյ գետանան՝ որ նոյն պարտէլին անցնելով նախաճաշի Կ'երթար, հռն տեսնելով Գէորգ Ապառուլահը, իր մօտ կը կանչէ զինքը, և Կ'ըսէ որ իւրկոն լուսանկարի գործիքը առնուն և երթայ նկարի այն սրահը, որը պաշնագիրը նմբազուած և ստորագրուած էր: Գէորգ՝ պատրաստ եմ Զեր բարձրու-թեան հրամանին ըսելով ու ցայլուր երա-գելով երր կը սկսի յառաջել, իգնատիէֆ զինքը կցնելով կ'ըսէ: « Զես հարցներ՝ ինչո՞ւ: Գէորգ յանկարածակի գալո՞՝ կէս մ'այլայլած, «ինչո՞ւ, բարձրապատի Տէր՝ Կ'ըսէ, այն առն իգնատիէֆ կը պատա-խանէ. «C'est là que l'Arménie a été constituée aujourd'hui même.» Այս-ուրախաւէտ յայտարարութիւնը այնպիսի ցաղցը հրամաննով և յուզումով մը կը լնու Գէորգայ ազգանէր սիրոց, որ ինքն-իրմէն դորս ելած, և հոգեկան անդիմա-դրեի ուժէ մը մզուած իսկոյն կը խոնարհի

անոր՝ առջև՝ և արտասովալից աշքերով՝  
երեք անգամ աղը կը համբուրէ, «Աչքէս  
արցունք եկաւ կ'ըսէ, ժէնէռալին ձեռքը  
առի պազի, անգամ մ'ալ պազի, անգամ  
մը ևս պազի և սրտափին շնորհակալու։  
թիւններս արցունքներովս արտայայտեցին  
ինքն ալ յուզուեցաւ, զգաց իմ ուրախու-  
թեանս անկեծութիւնն՝ և երկու ձեռքով  
երեսս շոյեց...»։

Գեղեցիկ պատկեր, ցաղցր և անուշանը ջանելու համար:

6. Ապտուլլահ եղբարց այս նոր յաջոս զութիւնը իրենց զէմ նախանձորդ կը յարուցանէ Սան Ստեֆանոյի յոյն արուեստակից Քարկօրուլոն, որ միանալով Հայ միտի վարձկան անձինքներէն միոյն հետ՝ չարանախանձ և ստոր բառւեամբ զանազան ամբաստանութիւններով կը Վարկարեկէ զանոնը յաջս կարմիր Սուլտանին։ և որովհետև այշ մի և նոյն օքրերուն Գ. Ապտուլլահ անխունեմութիւն կունենայ ազգասիրական եռանդէ մղուած ներայի իրենց ընակարանին մէջ մեծածախս և ճոխ իշխոյց մը սարքելու ոռւսական բանակին հայազգի զօրավարներուն ի պատիւր Հայ միտ արդէն իսկ եղած ամբաստանութիւններէ զրգուած, լսելով այս յանդուզն արարքը՝ Կրակ Կորած ծանր պատրժներուն սպառնալիքով՝ խակոյն հրաման կ'ընէ որ Կայսերական բուդրան վար առնուի, ինչ որ անմիջապէս կը կատարուի, և անշուշտ անպատճառ ալ պիտի շմային՝ իթէ իգանատիքի նման անձ մը իր ազդեցիկ միշնորդութիւնը ի գործ չզնէրո յայսարարելով Համբուր թէ Ապտուլլահ եղբարց այդ վայրկանէն իսկ պատսկան պաշտպանութեան ներան կը գտնուին։ Որդէն Մեծ դուցանիկուր ես կարին անգամաներ իր քարտուս դարք զրկած էր Բարձրագոյն դուռը՝ Սարացած Այսէն վէժիքի բաշայի մօն, որով ինդիքը անուշի կապուելով՝ թուլքան և ընդունէն վերադարձնելու խոստում կը տրուի, և այդ խոստում ալ կը կատարուի 1890ին։

Այս դէպքը՝ ոռւաական բանակին զօս բավարներէն ոմանց վրա, այնքան վատ

ազգեցութիւն գործեր էր՝ որ խորհուրդ կու տան անոնց մի անգամ ընդ միշտ թողութ Պոլիսը՝ և երթալ հաստատուիլ Պետերուրդ. «Զեր տեղը Պետերուրդ պէտք է լւլայ, թանի որ Պետերուրդի առաջնակարգ անձինքը ճանչցաց ճառ, պէտք է թողուց այս տեղու ու հոն հաստատուից» ևն. Սակայն ինչպէս Գէորգ կ'ըսէ, այդ պարագաներուն մէջ՝ «ոչ քաղաքականութիւն և ոչ օրէն միւսը իրազորել ալ առաջարկութիւնը»:

Այս միջոցին ինչպէս ըսմնից, Թուրք և Ռուս Պատերազմը հաղի վերջացած՝ և Ա. Ստեփանովի դաշնագիրն ալ ստորագրած և կնցուած էր, Եւրոպական մեծ պետութիւնները նոր գեսապահիորդուրդի մը՝ այսինքն Պետյոնի մէջ գումարուելից վեհածողովին պատրաստութիւնները կը տեսնէին; Խորէն Նարպէտ՝ որ կ. Պոլսոյ ազգային պատրիարքարանի ժողովն ընտրուած նուրբագներէն մին էր, և Պետերուրդ մեկնած էր յիշեալ գումարուելից ժողովին մէջ հայկական դատին պաշտպանութիւնն ուսւ կառավարութեան կողմէ ապահովելու համար, 1878 մայիս 10 թուակիր մի նամակով ուղղուած իր «Ազգասէր և ազգապատիք բարեկամ» Գէորգ Ապառուլահի, վերոյիշեալ գէպացին առթիւ, որուն արձագանցը մինչև այս տեղերը հասած էին, հետևեալ տողերը կը գրէ. «Բարբարոսութիւնը ի զուր ձեզի դէմ յաւակնեցաւ իւր ճիրանները բարձրացնել» Զեր ճակատը շատ բարձր է, նա չէ կարող ժամանել առ այն, և կորցել այն պասկը զոր բոլորած է հանճարը: — Զրկանըը ձեր պատիք առաւելացոյց ուրախ լերուց, վասն ի ազգին նահատակաց դասուն մէջ խառնեցաց գուր՝ որ ազգին ուրախութիւնն էր, պարծանըը և նորա անուան և պատույն լուսափիւս տարածողները: Լուսոյ որդիք, լուսոյ հետ է ձեր գործակցութիւնը, իւրաւարը երբեց չպիտի յաջողի իր մոայլը ձեր վրայ տարածելու...»:

Այս մի և նոյն նամակին մէջ՝ Նարպէտ դրուատիքի մէկ թանի տողեր ևս կը նուիրէ Գէորգ Ապառուլահի, որուն մէջ կը տես-

նուի ոչ միայն անոր անձնական ընտիր ձիրքերուն և բարեմանութիւնն հզգիտ պատկերը, այլ նաև արուեստագիտի բարձր հանճարը: «... Միրաս, կըսէ, ցնութեամբ կը խայտայ երբ կը տեսնեմ որ ձեր անունը այսցան տարածուած է, և ձեր տաղանդին արժէքը այսցան ճանչցուած է հոս (Պետերուրդ): Զեր անուան պատիւը՝ շող մը կը տարածէ այն ազգին վրայ որ պատիք ունի զծեց իւր ճշմարիս որդւոցը նախակարգ դատուն մէջ տեսնելու: Այն ազգին՝ որուն նուիրած էց ձեր ազնուական սիրու, բարձր հանճարը և լուսարորորց միւրը»:

Սոյն նամակը աւարտելու վրայ էր, ահա հազիք իմաց կը տրուի նարպէտի թէ այցելուներ եկած են, արդէն բարեկամ այցելուները՝ Տէր-Ղուկասով, Պատկանեան, կ. Եզկեանց, կոմս Պօլտիուպ և Վիքոնի ուր վօկնիւթիւն կը սովորէ: Հիշերը մենակը դրան տոշն հասած ժպտալից կ'ողջունեն զինքը, և սովորական պատշաճութեանց գրիսանակութենէն յետոյ՝ օրուան խօսակցութեան նիւթը կը դառնայ Հայկական հարցի շուրջը... Հիշերը մենակը պահուն գրասեղանին վրայ տեսնելով Ապտուլահ եղբարց քաշած լուսանկարները, այնցան հիանալի կը գըտնեն՝ որ իւրաքանչիւրը մէկ մէկ օրինակ իրը յիշատակ կ'առնու անոնցմէ, համարեկով զանոնց «ճարտարութեանդ ձերում հրաշալիքն»: Եւ շարունակելով նամակը, կ'ըսէ. «... Եւ որովհետեւ Տէր-Ղուկասովի անունը յիշեցի, յիշեմ նաև կոմս Լօրիս Մելիքովը մէն, որքան ձեր ազգասէր սրտերը պիտի խայտային՝ եթէ կարենային ինձ պէս միմել այս երկու քաջայալթ զօրագործական ձեռքերը, այն մեռքերը՝ որ ըստ նակալաց գլուխները ջախջախեցին, և հայկական կորովյ համբաւը տարածեցին ընդ բոլոր աշխարհն»:

Երէկ զետ լը ֆիօ զօրավարը (որ հոս Գաղղիոյ դեսպան է) հիացմամբ կը խօսէր ինձ սոյն հայկազն զօրավարաց և նոցանախանձորդ Ալխազովի և մանաւանդ զըժքադրդ Ենչքովնիքովի վրայ...»:

Մեր պաշտօնին ընթացից վրայ աւե-

լորդ կը համարիմ զրել, վասնչի լսած էր անջուղտ թէ ինչպէս պատուով ընդունուեցանց ի վեհ։ Կայսերէն, կորչառով իշխաննեն և միւս նախարարներէն... Հոս ամենայն ինչ առ այժմ յաջող դիրքի մէջ է։ Աղօթենց Աստոծոյ, որ խաղաղութիւնը

Հաստատուի և գեսպանաժողովը գումարուի, այն ատեն կը յուսանց որ Աստուծոյ այցելութիւնը զմեզ միխթարէ, շնորհելով հայրեննեաց մերոց երջանկաւէս ապագայ...»:

(Հարայարելի)

Հ. Ե. Տառեան

ՊԱՏՄԱԿԱՆ

#### **ՆԻՐԵՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Փ. ՊՈԼՍՈՅ Ա. ԳԵՂՋԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԻՐՔԵՐԸ ԶԵՌԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ

განკუ კაღამაბ ხა 1917 წელს გუნდანოւრ պა-  
տერადმან ათენ ხელი ფილიკორის ფ. ფილია  
აუზინჭი შეჩერებულ ფალავებ აպასთანაბ ჯა:

թիւ 1. — (Եկեղեցական անօթ թիւ 85, 270 կրամ կամ 97 տրամ արծաթ) Աւետարանիս արծաթապատ կողքը ունի Հնուեւելակ արձանազրութիւնը: «Ծատիկ սուրբ ահստարան Պետրոսի որդի տրացու օվհանեսին և կողալիքին բրարիս ենին և որդոյն տրցու մարտիրոսին սուրբ Գեղրայց թիվին ԱՄՊ (1771)ին Ցույն:» Բաւական աշխատաւած քաջ կոչու փորապետամբ երկու կափարիներ են առօք կեսառիկն կը պարունակենք վերեւ արտագրեալ յիշատակարանը: Ա. Կողքը ունի աստղեր, Ս. Ցովսէիք Յիսուսը գըրակած, նոյն կողքին վրայ կան նաև Աստուած, սուրբ մը և արծիւ մը, Ցովսանու կարապետի զիմաստուած մարմինը: Խոկ Բ. Կողքին վրայ չորս աւետարանիներ իրենց անուններով Ցօնանես, Մաթէոս, Սարկոս, Ղասու, նաևս հրեշտակներ, իհուսու հաշեալ, Խոկ սևե խաչին վրայ կան ծախթ Բ. Կ. Թ. Հ. Գրէը, իհաշին վերեւ կերեւի Աստուած: Գրէին մէջ ուրիշ արձանագրութիւն չկայ:

Թիվ 2. — Նոր կոտակարան տպ. Վենետիկ  
Անտոնի Գուտթօփ, 1766 մայիս 20, էջը 420. թաւ-  
շապատ կոցի որոն վրայ հնաբերք զերեան Յի-  
սուսի խաչալութեան և յարութեան անդապակնե-  
րու ինչպէս նաև հրեասպակներ և անդալիւռնի  
յիշասպակութիւն:

թի 8. — Աւետարան կաշեկազմ արձակ թի-  
թեղ զարգերով զարդարուած և հերթին Ա. Կողըք  
ունի. «Յիշատակի ար. աւետարան ունենաւ  
նսիփիմէ դրսութի զոր և կայ վայրին ար.  
Ասեմբլու կելեկցիոն ար. մերուպին 1803  
յունի 22-ը Ա. Ասեմբլանու Փ. Գուսյ Ա. Վեռա

եկեղեցոյն աջակողմեան պահարանին կամ մատուռին արուած անունն է: Սյոյն աւելարանին մէջ զարձակ կայ. «Ի վիթիկսի սր. Գեղրաց եկեղեցոյն յշխառակ է այս սր. աւելարանն մասունչ աղայի վեսան պղոսին համգործաց հորրից բուհունիցի մնափ. գերրդ ամերային մնափ. հաւատուրին և համայն Ենիշեղեղոց հոգին»:

Թիւ 4. — Նորհըրդանետը տպ. կ. Գոլիսի ի նորակերտ տպարտնի Գրիգոր զպքի Մարգուանց,  
թվին Ռժնիւ (1708). Գիրքն կը գտնեւէք պէտք վիճակի մէջ՝ Վերջին թերթին Բ. սիննակին վերջը  
նօտրզիր զբուծած է.

«**Յիշատակ** է խորհուրդատեսուր եղեածից  
րուայ որդի տիրացու ալիքսանին այլ և օժեալ  
վիմս որ օֆենաչ ի կոստանդնուպոլիս պա-  
տիրաբը ար. Կարասահուու վահեց աւետիք Վար-  
դապատիք ձեռաբը յիշատակ մահատորդ ժողո-  
վրդանք բրին ԱՄՄԾ (1763): — Խաչ գերջին  
Նորիքին Կողդան Որպայ ։ — Թօվին 1210 (1761)ին  
յուշիսի օճիւն որ էս Խօփիսայ ար. մարտիրոս  
Նորման նկի մանազրին ով եղաբար քահա-  
նացը խիստ պարտու կու մատուցէ իս մզատորս

յիշիք և յիշիա լինիչիք տառիք աստածոց Տ:  
թիւ 5. — Կարգ թաղման կարգաւորաց կը-  
մածին ապ. Գրիգորի Լուսաւորչի ԱՄԵՒԾ (1777)՝  
Կաշնաւտ տախուակ կամով, Ներքին Կող Ա. Է. Հ.  
«Յիշատակ է ար. գիրգու ընծայեա ի շնոր-  
հայի Արյ. Առողջ էլքմածին զանակալին և  
ընդհանուր Արքան. հայրապետին Տն. Տե. Պո-  
կասուի ի փայլութեա շօսորից ար. Մանուկ ըն-  
դիր բանասային որ ի ֆիշիք ի ԱՄԵՒԾ (1777)  
թվին յամանան ուժին Տ. Տ.

**Թիւ 6.** — Գրքոյկ Կոչեցեալ երգարան ՌՄԻԱ (1772) - Գետրոս վոր, Զափանաւու ի տա. Առ-